ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2026 թվականի N 1679 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 1010-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի ««Երևանի Գ. Էմինի անվան N 182 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Երևանի Գ. Էմինի անվան N 182 ավագ դպրոց» հիմնադրամի վերակազմավորելու մասին» N 1010-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 56-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«56. Խորհուրդը բաղկացած է 7 անդամից, որի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի ներկայացմամբ՝

1) չորս անդամ՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի առաջադրմամբ.

2) մեկ անդամ՝ Երևանի քաղաքապետարանից.

3) մեկ անդամ՝ մանկավարժական կազմից.

4) մեկ անդամ՝ ծնողական խորհրդի կազմից։»։

2. Սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի ««Երևանի Գ. Էմինի անվան N 182 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Երևանի Գ. Էմինի անվան N 182 ավագ դպրոց» հիմնադրամի վերակազմավորելու մասին» N 1010-Ա որոշման մեջ կատարված փոփոխությունը կատարել Հայաստանի Հանրապետության արդա-րադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2025 թվականի հունվարի 24-ին պետական գրանցում ստացած «Երևանի Գ. Էմինի անվան N 182 ավագ դպրոց» հիմնադրամի գործող կանոնադրության մեջ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ